ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«13» Մարտ 2024թ.

ՀՐԱՄԱՆ N 143-Հ

«ՅՈՒՏԷՅՐ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՈՒՆ» ԲԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 26-ի N 561-Ա հրամանը և «Յուտէյր» ավիաընկերություն» ԲԲ ընկերության 2024 թվականի փետրվարի 20-ի հայտերը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Յուտէյր» Ավիաընկերություն» ԲԲ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Մոսկվա/UUWW/-Երևան/UDYZ/-Մոսկվա/UUWW/ երթուղով՝ 2024 թվականի մարտի 31-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 26-ը՝ շաբաթական 7 (յոթ) չվերթ հաճախականությամբ, Տյումեն/USTR/-Երևան/UDYZ/-Տյումեն/USTR/ երթուղով՝ 2024 թվականի մարտի 31-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 20-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ և Սուրգուտ/USRR/-Երևան/UDYZ/-Սուրգուտ/USRR/ երթուղով՝ 2024 թվականի ապրիլի 5-ից մինչև 2024 թվականի

հոկտեմբերի 25-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված Տյումեն/USTR/-Երևան/UDYZ/-Տյումեն/USTR/ երթուղով չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 26-ի N 561-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Տյումեն/USTR/-Երևան/UDYZ/-Տյումեն/USTR/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը (ԻԱՏԱ) 2024 թվականի ամառային նավիգացիոն ժամանակահատվածում՝ 2024 թվականի մարտի 31-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 20-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմանների, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին և որոնց վրա տարածվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 26-ի N 561-Ա հրամանի 2-րդ կետով նախատեսված արտոնությունը:

3. Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածի մասով արտոնության վերաբերյալ դրույթները կսահմանվեն առանձին հրամանով՝ Ընկերության կողմից ներկայացվող հայտի հիման վրա:

4. Կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Կոմիտեի պաշտոնական կայքէջում:

5. Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

Recoverable Signature

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 039/2024
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻՑ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 039/2024
TO THE FOREIGN OPERATOR FOR SCHEDULED AIR SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Յուտէյր» Ավիաընկերություն» ԲԲԸ "UtAir" Aviation PJSC
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft	BOEING 735, BOEING 738, BOEING 762
Հաճախականությունը Frequency	շաբաթական 1 չվերթ 1 flight per week
Երթուղին Air Route	Տյումեն/USTR/-Երևան/UDYZ/-Տյումեն/USTR/ Tyumen/USTR/-Yerevan/UDYZ/-Tyumen/USTR/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	31/03/2024 մինչև 20/10/2024 31/03/2024 till 20/10/2024

3/19/2024

ՔԱՂԱՔԱՑԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
CHAIR OF CIVIL AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHTRYAN

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3908540266

ՔԱՂԱՔԱՑԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵ CIVIL AVIATION COMMITTEE ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՎԵՐ է ELECTRONIC SIGNATURE IS VALID

19.03.2024
(տալու ամսաթիվը)
(date of issue)